

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2013Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏԻ

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս. Սիմոնյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

1. Հոբելյաններ:
2. Իրավագիտության ֆակուլտետի 2013-2014 ուս. տարվա նախապատրաստության մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան, դեկան, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան):
3. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին (զեկուցող՝ ի.գ.թ., դոցենտ Ա. Մարգարյան):
4. Ընթացիկ հարցեր:

1. ՀՈՐԵԼՅԱՆՆԵՐ.

ԼՍԵՑԻՆ. Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գ. Ղազինյանը Ֆակուլտետի ողջ անձնակազմի անունից շնորհավորեց պրոֆեսոր Աիդա Իսկոյանին և դոցենտ Գևորգ Հովսեփյանին՝ ծննդյան 75-րդ տարեդարձերի կապակցությամբ՝ ընդգծելով հոբելյարների դերը հայրենական իրավագիտության զարգացման, ինչպես նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կյանքում ունեցած ներդրման գործում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Խորհրդի անդամ ի.գ.դ. Դ. Ավետիսյանը ՀՀ վճարեկ դատարանի և ՀՀ դատավորների միության անունից շնորհավորեց պրոֆեսոր Աիդա Իսկոյանին և դոցենտ Գևորգ Հովսեփյանին և նրանց հանձնեց 2013թ-ի սեպտեմբերի 06-ի թիվ 11 որոշմամբ սահմանված պատվոգրերը:

Արտահայտվեցին նաև ի.գ.դ. Վ. Հովհաննիսյանը, ի.գ.դ. Ս. Բարսեղյանը: Գ. Հովսեփյանը հանդես եկավ շնորհակալական խոսքով:

2. **ԼՍԵՑԻՆ.** *Իրավագիտության ֆակուլտետի 2013-2014 ուս. տարվա նախապատրաստության մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան, դեկան, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան):*

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Գ. Ղազինյանը ներկայացրեց ֆակուլտետի առաջին կուրս ընդունված փաստացի ուսանողների քանակը (164), որոնց

պետք է ավելանան նաև սփյուռքից և Արցախից ընդունվող ուսանողները: Արդյունքում մոտավորապես առաջին կուրսի ուսանողների քանակը կկազմի մոտ 180 հոգի:

Նա նաև ներկայացրեց ֆակուլտետի 80-ամյակի հետ կապված ֆակուլտետի վերանորոգման աշխատանքների արդյունքները, ինչպես նաև այդ հոբելյանին նվիրված միջոցառումների ծրագիրը:

Անդրադարձ կատարվեց նաև սեպտեմբերյան առաջին դասերի և քննությունների վերահանձնումների ընթացքին:

3. ԼՍԵՑԻՆ. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին (գեկուցող՝ մեթոդխորհրդի նախագահ, դոցենտ Ա. Մարգարյան):

Մեթոդխորհրդի նախագահ Աննա Մարգարյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի դասախոսներին և հատկապես լաբորանտներին այս ոլորտում կատարված աշխատանքների համար՝ ընդգծելով, որ աշխատանքները չեն կասեցվել անգամ ամառվա ընթացքում:

Նա ներկայացրեց, որ բոլոր ամբիոններից էլ ստացվել են առարկայական ծրագրերը, հետ վերադարձից հետո թերությունները շտկվել են և ֆակուլտետի ամբողջ ուսումնական-առարկայական ծրագրերից մոտ 80% պատրաստ են ամբողջությամբ, իսկ մնացածները որոշ չնչին շտկումների են ենթակա, և կարելի է ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղազինյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Վ. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Միաձայն հաստատել արդեն իսկ պատրաստ ուսումնական-առարկայական ծրագրերը:

4. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ.

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի դոցենտ Արսեն Նիկողոսյանի «Հարկային մարմնի քննությանը ենթակա իրավախախտումները և հարկային վեճերի լուծման արտադատական կարգը ՀՀ-ում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը, Ա. Մարգարյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի 2013թ-ի հունիսի 12-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Արմեն Հայկյանցի «Միջազգային մասնավոր իրավունք» վերտառությամբ դասագրքի վերահրատարակման երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Ավետիսյանը, Ա. Հայկյանցը, Տ. Բարսեղյանը, Ա. Մարգարյանը Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2013թ-ի սեպտեմբերի 4-ի նիստի թիվ 1 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ի.գ.դ., պրոֆեսոր Արմեն Հայկյանցի «Միջազգային մասնավոր իրավունք» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել վերահրատարակման:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Սիմոնյան

ՔԱՂՎԱԾՔ

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ. սեպտեմբերի 6-ի նիստի արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի դոցենտ Արսեն Նիկողոսյանի «Հարկային մարմնի քննությանը ենթակա իրավախախտումները և հարկային վեճերի լուծման արտադատական կարգը ՀՀ-ում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը, Ա. Մարգարյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի 2013թ-ի հունիսի 12-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Միմոնյան

Իսկականի հետ ճիշտ է

Խորհրդի քարտուղար

Տ. Միմոնյան

ՔԱՂՎԱԾՔ

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ. սեպտեմբերի 6-ի նիստի արձանագրությունից**

ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Արմեն Հայկյանցի «Միջազգային մասնավոր իրավունք» վերտառությամբ դասագրքի վերահրատարակման երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ. Ավետիսյանը, Ա. Հայկյանցը, Տ. Բարսեղյանը, Ա. Մարգարյանը Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2013թ-ի սեպտեմբերի 4-ի նիստի թիվ 1 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ի.գ.դ., պրոֆեսոր Արմեն Հայկյանցի «Միջազգային մասնավոր իրավունք» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել վերահրատարակման:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Միմոնյան

Իսկականի հետ ճիշտ է

Խորհրդի քարտուղար

Տ. Միմոնյան